ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՎՈԼԳԱՅԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ (ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ) ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզպետարանի աշխատակազմը (Հայաստանի Հանրապետություն) և Վոլոգդայի մարզի Կառավարությունը (Ռուսաստանի Դաշնություն), այսուհետ՝ Կողմեր,

նպատակ ունենալով ամրապնդելու փոխադարձ կապերը և համագործակցությունը,

ղեկավարվելով 1997 թվականի օգոստոսի 29-ի՝ Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին Պայմանագրի, 2001 թվականի սեպտեմբերի 15-ի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև Հայաստանի Հանրապետության մարզերի վարչակազմերի և Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների վարչակազմերի (կառավարությունների) միջև համագործակցության մասին Համաձայնագրի դրույթներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված այլ միջազգային պայմանագրերով,

հիմք ընդունելով Արմավիրի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Վոլոգդայի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար կապերի զարգացման փոխադարձ շահագրգռվածությունը,

ձգտելով Արմավիրի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Վոլոգդայի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) միջև շուկայական հարաբերությունների զարգացման համար բարենպաստ պայմանների հաստատմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրությանը համապատասխան, Արմավիրի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Վոլոգդայի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) զարգացմանը աջակցելու նպատակով կնպաստեն առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար բնագավառների ծավալմանը և ամրապնդմանը:

Հոդված 2

Համագործակցությունը կատարվում է փոխշահավետության սկզբունքների հիման վրա՝ Կողմերի համար փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բնագավառների նախագծերի համատեղ իրականացման ճանապարհով:

Հոդված 3

Կողմերը կնպաստեն ապրանքային շուկաների զարգացմանը, մանր և միջին գործարարության սուբյեկտների համագործակցության հաստատմանը, տնտեսվարող սուբյեկտների համատեղ գործարար ծրագրերի իրականացմանը:

Հոդված 4

Կողմերը իրականացնում են ցուցահանդեսային և տոնավաճառային միջոցառումների տեղեկատվության փոխանակում, աջակցություն են ցուցաբերում ցուցահանդեսների և տոնավաճառների անցկացմանը և դրանցում հետաքրքրված տնտեսվարող սուբյեկտների ներգրավմանը:

Հոդված 5

Կողմերն, իրենց իրավասությունների շրջանակներում, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գործող օրենսդրությանը համապատասխան, զարգացնում են փոխշահավետ համագործակցություն գիտության և տեխնիկայի, մշակույթի, սպորտի և տուրիզմի բնագավառներում՝ տնտեսվարող սուբյեկտների միջև անմիջական փոխազդեցության աջակցության ճանապարհով՝ անկախ նրանց կազմակերպա-իրավական ձևերից:

Հոդված 6

Կողմերն աջակցում են կրթության բնագավառի գործընկերային հարաբերությունների զարգացմանը՝ կրթական ծրագրերի նախագծման և իրականացման փորձի փոխանակման ճանապարհով՝ կազմակերպելով Արմավիրի մարզի (Հայաստանի Հանրապետություն) և Վոլոգդայի մարզի (Ռուսաստանի Դաշնություն) կրթական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը սեմինարներին, կոնֆերանսներին, ցուցահանդեսներին, կլոր սեղաններին՝ միտված կրթության բնագավառի առաջնահերթ ուղղությունների զարգացմանը, աջակցում են համագործակցությանը երեխաների և

երիտասարդության դաստիարակման պետական քաղաքականության բնագավառում:

Հոդված 7

Կողմերը զարգացնում են համագործակցությունը միջէթնիկական և միջդավանական բնագավառներում, աջակցում են տեղեկատվական հաղորդագրությանը և փորձի փոխանակմանը իշխանության մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխհամագործակցության բնագավառներում:

Հոդված 8

Կողմերը իրականացնում են շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների օգտագործման տեղեկատվության և փորձի փոխանակում:

Հոդված 9

Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանության և կատարման հետ կապված տարաձայնությունները լուծվում են փոխադարձ խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 10

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով:

Հոդված 11

Կողմերը մշակում և հաստատում են սույն Համաձայնագրի դրույթների իրականացմանը ուղղված փոխհամագործակցության ծրագրեր:

Հոդված 12

Կողմերը ժամանակին տեղեկացնում են միմյանց Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության օրենսդրության փոփոխությունների վերաբերյալ, որոնք կարող են ազդել սույն Համաձայնագրի իրականացման վրա:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից Ռուսաստանի Դաշնության Վոլոգդայի մարզի Կառավարության սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի իրականացման մասին գրավոր ծանուցման ստացման օրվանից:

Համաձայնագիրը գործում է 5 տարվա ընթացքում, որից հետո ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա հնգամյա ժամկետներով, եթե Կողմերից որևէ մեկը, հերթական ժամկետի ավարտից առնվազն 6 ամսից առաջ, գրավոր չծանուցի նրա գործողությունը դադարեցնելու՝ իր մտադրության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի ապրիլի 7 -ին երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Արմավիրի մարզի	**Վոլոգդայի մարզի**
(Հայաստանի Հանրապետություն)	**(Ռուսաստանի Դաշնություն)**
վարչակազմի կողմից՝	**կառավարության կողմից՝**

СОГЛАШЕНИЕ
между Администрацией Армавирской области (Республика Армения) и Правительством Вологодской области (Российская Федерация) о торгово-экономическом, научно-техническом и гуманитарном сотрудничестве

Администрация Армавирской области (Республика Армения) и Правительство Вологодской области (Российская Федерация), совместно именуемые Стороны,

в целях укрепления связей и сотрудничества,

руководствуясь положениями Договора о дружбе, сотрудничестве и взаимной помощи между Республикой Армения и Российской Федерацией, подписанного 29 августа 1997 года, Соглашения между Правительством Республики Армения и Правительством Российской Федерации о принципах сотрудничества между областными администрациями Республики Армения и администрациями (правительствами) субъектов Российской Федерации от 15 сентября 2001 года, а также другими международными договорами между Республикой Армения и Российской Федерацией,

основываясь на взаимной заинтересованности в расширении двусторонних торгово-экономических, научно-технических и гуманитарных связей между Армавирской областью (Республика Армения) и Вологодской областью (Российская Федерация),

стремясь к созданию благоприятных условий для развития рыночных отношений между Армавирской области (Республика Армения) и организациями Вологодской области (Российская Федерация) (далее – хозяйствующие субъекты),

согласились о нижеследующем:

Статья 1

Стороны в рамках своей компетенции в соответствии с законодательством Республики Армения и Российской Федерации способствуют расширению и укреплению торгово-экономического, научно-технического и гуманитарного сотрудничества в целях содействия развитию Армавирской области (Республика Армения)и Вологодской области (Российская Федерация).

Статья 2

Сотрудничество осуществляется на основе взаимной выгоды путем реализации совместных проектов в областях, представляющих обоюдный интерес для Сторон.

Статья 3

Стороны содействуют развитию товарных рынков, установлению деловых контактов для субъектов малого и среднего предпринимательства, реализации совместных деловых проектов хозяйствующих субъектов.

Статья 4

Стороны осуществляют обмен информацией о выставочно-ярмарочных мероприятиях, оказывают содействие в проведении выставок и ярмарок и привлечении к участию в них заинтересованных хозяйствующих субъектов.

Статья 5

Стороны в рамках своей компетенции развивают взаимовыгодное сотрудничество в области науки и техники, культуры, спорта и туризма на договорной основе путем содействия прямому взаимодействию между хозяйствующими субъектами независимо от их организационно-правовых форм с соблюдением действующего законодательства Республики Армения и Российской Федерации.

Статья 6

Стороны способствуют развитию партнерских отношений в области образования путем обмена опытом по разработке и реализации образовательных проектов, организации участия представителей образовательных организаций Армавирской области (Республика Армения)и Вологодской области (Российская Федерация) в семинарах, конференциях, выставках, круглых столах по приоритетным направлениям развития образования; способствуют сотрудничеству в области государственной политики воспитания детей и молодежи.

Статья 7

Стороны развивают сотрудничество в области межнациональных и межконфессиональных отношений, способствуют информационному контакту и обмену опытом в области взаимодействия органов власти и институтов гражданского общества.

Статья 8

Стороны обмениваются информацией и опытом относительно охраны окружающей среды и рационального природопользования.

Статья 9

Все споры между Сторонами, связанные с толкованием и реализацией положений настоящего Соглашения, разрешаются путем консультаций и переговоров.

Статья 10

По взаимному согласию Сторон в текст настоящего Соглашения могут вноситься изменения и дополнения, оформляемые отдельными протоколами.

Статья 11

Стороны разрабатывают и утверждают программы сотрудничества во исполнение положений настоящего Соглашения.

Статья 12

Стороны своевременно информируют друг друга об изменениях в законодательстве Российской Федерации и Республики Армения, которые могут повлиять на реализацию настоящего Соглашения.

Статья 13

Настоящее Соглашение вступает в силу с даты получения Правительством Республики Армения письменного уведомления

Правительства Вологодской области Российской Федерации о выполнении внутренних процедур, необходимых для его вступления в силу.

Соглашение действует в течение 5 лет, после чего автоматически продлевается на очередной пятилетний срок до тех пор, пока одна из Сторон не уведомит другую Сторону в письменной форме не позднее, чем за шесть месяцев до даты окончания очередного пятилетнего срока о своем намерении прекратить его действие.

Совершено в г. Ереван «7» апреля 2016 года в двух экземплярах, каждый на армянском и русском языках, причем оба текста имеют одинаковую силу.

За Администрацию
Армавирской области
(Республика Армения)

За Правительство
Вологодской области
(Российская Федерация)